CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն

Հունվարի 17, 2024

Կայացավ ՔՈԱՖ-ի Երեխայի և ընտանիքի կենտրոնի հիմնարկեքի արարողությունը Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղում

ԱՐՄԱՎԻՐ — Հունվարի 17-ին Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղում տեղի ունեցավ «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից կառուցվող Երեխայի և ընտանիքի կենտրոնի հիմնարկեքի արարողությունը: Այն նշված մարզում կառուցվող ՍՄԱՐԹ ավանի առաջին բաղադրիչն է, որը կառուցվում է ամերիկահայ բարերար Հագոպ Յուրեջյանի նվիրաբերության շնորհիվ և համընկնում է ՀՀ Կառավարության՝ Արմավիրի մարզի զարգացման ռազմավարության ուղղությունների հետ:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը, Արմավիրիր մարզպետ Դավիթ Խուդաթյանը, Արմավիրի քաղաքապետ Վարշամ Սարգսյանը, «Յուրեջյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հիմնադիր, ՔՈԱՖ-ի խոշորագույն բարերարներից Հագոպ Յուրեջյանը, ՔՈԱՖ-ի գլոբալ գործադիր տնօրեն Արա Բարսամը և գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

ՔՈԱՖ-ի Երեխայի և ընտանիքի կենտրոնը զարգացման ծրագրերի ու ծառայությունների լայն շրջանակ կառաջարկի Արմավիրի մարզի երեխաների համար, որոնց թիվն այս պահին ապագա կենտրոնի շահառու դիտարկվող 14 համայնքում 3,000-ից ավելի է: Ներառելով վաղ մանկան կրթության, լոգոպեդական, հոգեբանական և սոցիալական աշխատողի ծառայությունները՝ կենտրոնը նաև կիրականացնի ծնողների համար նախատեսված սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ և բազմակողմանի իրազեկման նախաձեռնություններ:

«Համայնքի ղեկավարի պաշտոնում ինձ համար ամենաոգևորիչ մեկնարկը կարող էր լինել այս նախագիծը»,-բացման խոսքում նշել է նորանշանակ մարզպետ Դավիթ Խուդաթյանը՝ հավելելով. «Ես ուրախ եմ, որ մեր ճակատագիրը որոշելու մանդատը կտանք այնպիսի մարդկանց, ովքեր նմանօրինակ զարգացած միջավայրից են դուրս գալիս: Առանձնակի ուրախ եմ ՔՈԱՖ-ի հետ համագործակցելու համար, իրականում այս մեգանախագիծը ավելի, քան պարտավորեցնող է»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանն շեշտել է. «Երեխաների շուրջ կատարված յուրաքանչյուր նախաձեռնություն ուղիղ ներդրում է Հայաստանի հանրապետության զարգացման և ամրացման մեջ»:

coaf.org
coaf@coaf.org
+374 10 502076

ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանն ընդգծել է Արմավիրում նման կենտրոն հիմնելու կարևորությունը՝ նշելով. «Ինչպես իր բոլոր նախագծերի, այնպես էլ այս ծրագրի իրականացման ընթացքում ՔՈԱՖ-ը սերտորեն աշխատում է պետական, մարզային և տեղական իշխանությունների հետ՝ ապահովելու տարածաշրջանի առանձնահատուկ կարիքների բավարարումը: Երեխայի և ընտանիքի կենտրոնը դառնալու է նաև եզակի ռեսուրսային կենտրոն Արմավիրի համայնքների դպրոցների, մանկապարտեզների մանկավարժական և հարակից մասնագետների համար»:

ՔՈԱՖ-ի վաղեմի ընկեր, ամերիկահայ բարերար Հագոպ Յուրեջյանը հիշում է. «ՔՈԱՖ-ի հետ իմ համագործակցությունը մեկնարկել է հենց այստեղ՝ Արմավիրում: Երբ առաջին անգամ այցելեցի ՔՈԱՖ Քարակերտի կենտրոն, անչափ տպավորվեցի, հատկապես որ այդ ամենն արվում է երեխաների ու նրանց ընտանիքների համար: Դա ինձ իսկապես մեծ ուրախություն պատճառեց, և ես վստահ եմ, որ Մյասնիկյան գյուղում կառուցվող այս կենտրոնը նույնպես կարևոր դեր կխաղա տեղի ու հարակից համայնքների մանուկների համար»:

ՔՈԱՖ-ի մասին ավելին իմանալու և հիմնադրամի առաքելությանն աջակցելու համար այցելեք coaf.org կայք:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին
«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Նանա Մարդոյան
Էլ. հասցե՝ nana.mardoyan@coaf.org
Բջջ.՝ +374 55 003 723